ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 135 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև:

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը.

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ.

Կարևորելով ուսանողների և ապագա մարզիչ–մանկավարժների պրակտիկ ոլորտում կարողությունների զարգացումը.

Ընդունելով Ինստիտուտի և Կազմակերպության պատրաստակամությունը պրակտիկ համատեղ հետազոտությունների իրականացման, ուսանողների պրակտիկաների կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ինստիտուտը պատրաստակամ է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պրակտիկ թեմաներ առաջարկել ուսանողներին՝ Ինստիտուտի մասնագիտական ամբիոններում և/կամ Կազմակերպությունում հետազոտություններ իրականացնելու, հատկապես՝ դպրոցականների շրջանում առողջ ապրելակերպի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը խթանելու վերաբերյալ, իսկ Կազմակերպությունը

իր պատրաստակամություն է հայտնում գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել այդ հետազոտություններն իրականացնողներին.

2.2 Սույն Հուշագրով Ինստիտուտը և Կազմակերպությունը համագործակցում են նաև

2.2.1 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում

2.2.2 Սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով

2.2.3 Ինստիտուտի և Կազմակերպության գործունեության ոլորտներին առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում

2.2.4 Վարպետաց տեսական դասերի և գործնական պարապմունքների անցկացման գործում

2.2.5 Հանրաճանաչ մարզիկների և մարզիչների հետ հանդիպումների կազմակերպման շուրջ

2.2.6 Մասնագիտական կողմնորոշման նպատակով ինստիտուտ շրջայցեր կատարելու միջոցով

2.2.7 Հանրակրթական դպրոցի սովորողների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստության վերաբերյալ քննարկումների անցկացման միջոցով

2.2.8 Մրցումների, հուշամրցաշարերի, մարզական տոնների, ցերեկույթների համատեղ կազմակերպման գործում

2.2.9 Տեսական և գործնական պարապմունքների անցկացման ուղղությամբ մեթոդական օգնություն ցուցաբերելու ոլորտում

2.2.10 Օլիմպիզմի գաղափարների տարածման շուրջ

2.2.11 Մարզաբազաների, տարածքների, գույքի օգտագործման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման ինչպես նաև Ինստիտուտի և Կազմակերպության լիազոր ներկայացուցիչների միջոցով Կազմակերպությունում բուհի շրջանավարտներին աշխատանքի անցնելուն աջակցման հարցերի շուրջ

2.2.12 Ուսանողական պրակտիկանների ընթացքում փոխայցելությունների կազմակերպման միջոցով

2.2.13 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու միջոցով

2.2.14 Ինստիտուտի ուսանողների մասնագիտացմանն առնչվող գիտագործնական և մասնագիտական կատարելագործման, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների ներդրման ուղղություններով:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Ինստիտուտը և Կազմակերպությունը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒԹՆԵՐ

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2022 թվականի նոյեմբերի 18–ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինստիտուտ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ք. Երևան, Կիևյան Մանուկյան 11

Ռեկտոր՝ Գայանե Խիթարյան

ստորագրություն Կ.Տ.

Կազմակերպություն

«Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ք. Երևան, Նոր Նորք 2-րդ զանգված, Նելսոն Ստեփանյան 5

Տնօրեն՝ Գարեգին Ներսեսյան

ստորագրություն Կ.Տ.